«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# *Ավարտական հետազոտական աշխատանք*

**Թեմա՝** ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

**Առարկա՝** Անգլերեն

**Ուսուցիչ՝** Տաթևիկ Մանուկյան

**Դպրոց՝** Երևանի Ա. Իսահակյանի անվան N16 ավագ դպրոց

**Ղեկավար՝** Անուշ Խաչիկյան

**ԵՐԵՎԱՆ – 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | | |
|---|---|---|---|
| | | ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | **3** |
| | ԳԼՈՒԽ 1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ե ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՏԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ | | 5 |
| | 1.1 | Ուսուցչի հեղինակության մանկավարժական տեսանկյունները | 5 |
| | 1.2 | Ուսուցչի հեղինակության ազդեցության կարևորությունը աշակերտի անհատականության զարգացման վրա | 7 |
| | ԳԼՈՒԽ 2 ՍՈՑԻՈԼՈԳԱԼԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ | | 9 |
| | 2.1 | Սոցիոլոգիական հարցման նախապատրաստումը և իրականացումը | 9 |
| | 2.2 | Սոցիոլոգիական հարցման աշխատանքի վերլուծություն և ամփոփում | 10 |
| | | ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 19 |
| | | ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 21 |

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցը աշակերտի համար մի վայր է, որտեղ երեխան յուրացնում է տարբեր սոցիալական դերեր, պատրաստվում հասուն կյանքի, որն իրականացվում է ուսուցիչների շնորհիվ: Մարդն իր մանկության հիմնական մասն անցկացնում է դպրոցում: Այս ժամանակահատվածը տարիքային զարգացման ամենաբարդ շրջանն է:

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ երեխաների դաստիարակության գործում դպրոցը շատ մեծ նշանակություն ունի, քանի որ ընտանիքից հետո այն հաջորդ կարևոր սոցիալական նշանակություն ունեցող հաստատությունն է, որն ազդում է անձի ձևավորման վրա: Ուսուցչի գործունեության հիմնական նպատակը սովորողների համար այնպիսի միջավայրի ապահովումը պետք է լինի, որտեղ նրանք հնարավորություն կունենան ինքնաբացահայտվելու, զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ որպես անհատ կայացմանը և հետագայում հասարակության մեջ արդյունավետ ներառմանը:

Կրթական աշխատանքի արդյունավետությունը ուղղակիորեն կախված է նաև նրանից, թե որքանով է կայացած ընտանիք-դպրոց համագործակցությունը: Այլ կերպ ասած, միայն ուսուցիչների և ծնողների լիարժեք համագործակցությամբ է հնարավոր ձևավորել բարոյական բարձր արժեքներ ունեցող և սոցիալապես հասուն անհատականություն: Երեխայի դաստիարակության հարցը միշտ էլ եղել, կա ու կլինի արդիական ու խիստ կարևոր, դրա համար էլ չափազանց կարևոր է դասղեկի դերը:

Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները և մարդկային որակները արդի պայմաններում շատ են կարևորվում, քանի որ նրանք են կրթում և զարգացնում մատաղ սերնդին:

Մանկավարժական գործունեությունը շատ բարդ և դժվարին է: Նրա գործունեությունը ներառում է աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև անձնային բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները:

Հանրակրթական դպրոցներում ուսուցիչը պետք է ունենա բազմակողմանի զարգացվածություն, լայն մտահորիզոն և ցանկացած պահի, ինչպես հանրագիտակը,

հանպատրաստից պատասխանի աշխակերտների հարցերին: Նա պետք է տիրապետի իր մասնագիտության յուրաքանչյուր տարրին, մանրամասներին:

Ուսուցչի անձը ուսուցման գործընթացում առաջնային տեղ է զբաղեցնում, նրա այս կամ այն հատկությունները բարձրացնում կամ իջեցնում են ուսուցանման դաստիարակչական ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ, առանձնացվում են «հատուկ ուսուցչական հատկություններ»՝ վերագրելով դրանց «ուսուցչի մասնագիտական պատրաստությունը» և «անձնական ուսուցչական տաղանդը»: Առաջին հատկությունն օբյեկտիվ է և բնութագրում է ուսուցչի կողմից առարկայի իմացության աստիճանը, գիտական պատրաստվածությունը, կրթվածությունը, այնուհետեև առարկայի մեթոդաբանության, ընդհանուր դիդակտիկ սկզբունքների և երեխայի բնույթի իմացությունը:

Երկրորդ հատկությունը սուբյեկտիվ է և արտացոլում է դասավանդման արվեստը, անձնական մանկավարժական տաղանդն ու ստեղծագործականությունը: Այն ներառում է մանկավարժական վարպետությունը, ինքնուրույնությունն ու արվեստը:

Բացի «հատուկ ուսուցչական հատկություններից»՝ անհրաժեշտ է նշել նաև «բարոյական» հատկությունների մասին, որոնց դասվում են անկողմնակալությունը, բարեսրտությունը, ուշադրությունը, արդարությունը, կայունությունը, նրբազգացութունը, իսկական սերը աշակերտների հանդեպ: Նաև նշենք, որ ուսուցչի համար շատ կարևոր է ինքնակատարելագործման, ինքնազարգացման ցանկությունը:

Աշակերտների հետ շփման գործում ուսուցիչը պետք է օժտված լինի անձնային բարձր որակներով: Անհրաժեշտ է այնպիսի որակների համադրություն, ինչպիսիք են նպատակաուղղվծաությունը, վճռականությունը, աշխատասասիրությունը, դիտողականությունը: Հատուկ ընդգծվում է սրամտության, հռետորական, արտիստիկ ընդունակությունների կարևորությունը:

**Հետազոտության նպատակն է** ուսումնասիրել ուսուցչի մասնագիտության էությունն ու բացահայտել նրա հեղինակության ազդեցությունը աշակերտների անձի զարգացման վրա:

Հետազոտության նպատակից առաջադրվում են հետևյալ **խնդիրները.**

1. Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն։
2. Ուսումնասիրել ուսուցչի մասնագիտության էությունը, նրա մասնագիտական և անձնային որակները։
3. Բացահայտել ուսուցչի հեղինակության ազդեցությունը աշակերտի անհատականության զարգացման վրա։
4. Իրականացնել հետազոտական աշխատանք, աշակերտի անձի զարգացման վրա ուսուցչի հեղինակության ազդեցության վերաբերյալ։

**Հետազոտության մեթոդները։** Մագիստրոսական թեզի ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- մանկավարժահոգեբանական գրականության վերլուծության,
- զրույցի,
- դիտման,
- սոցիոլոգիական հարցման,
- վիճակագրական տվյալների վերլուծության։

Աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից։ Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային 65 էջ։

# ԳԼՈՒԽ 1.

# ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՏԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

## 1.1 Ուսուցչի հեղինակության մանկավարժական տեսանկյունները

Ուսուցչի աշխատանքը բոլոր ժամանակներում էլ եղել է հարգված ու պահանջված աշխատանք: Այն բժշկության հետ միասին հասել է մինչև մեր օրերը դարերի խորքից: Ոչինչ երբեք չի կարող փոխարինել ուսուցիչ-դաստիարակին, նրա մանկավարժական վարպետությանը, կուլտուրային և իհարկե ամենակարևորին՝ հեղինակությանը: Մեր օրերում էականորեն փոխվել է ուսուցչի դերը հասարակության մեջ:

Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթության ներկայացվող պահանջները: Կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր կերպարով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Այսօր աշակերտակենտրոն և փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ: Մանկավարժ, ով կարևորում է աշակերտի մտածողության զարգացումը, ուսուցման ժամանակ հենվում է աշակերտների կարծիքի վրա, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել:

Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանկավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Այդ է պատճառը, որ «Հանրակրթության պետական կրթակարգ»–ում նշվում է, որ «ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները,

պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ»[Հովհաննիսյան2006:24]

Ուսուցիչն այսօր նոր մարտահրավերների առջև է կանգնած. կրթական անվերջանալի թվացող բարեփոխումները, ծրագրային փոփոխությունները, ժամանակակից աշակերտի մտածելակերպն ու պահանջները և շատ այլ գործոններ նրան ստիպում են վերանայել իր աշխատանքային զինանոցում եղած գործիքները՝ մեթոդները, աշխատառճը, գիտելիքները, այլապես ձախողումն անխուսափելի կլինի:

Ուսուցիչը սոսկ տեղեկույթի կրող և հաղորդող չէ. նա աշակերտների համար հեղինակություն է, նրանց մեջ զարգացնում է ինքնուրույն մտածելու, հսկայածավալ տեղեկատվության մեջ կողմնորոշվելու, մշակելու և դրանք նպատակային ու արդյունավետ օգտագործելու կարողություն: Ժամանա կակից ուսուցչի խնդիրն է.

- հաղորդել կայուն և խոր գիտելիքներ
- կանխատեսել գործունեության տարբեր ձևերի ազդեցությունը սոցիալականացման և անձնային որակների ձևավորման վրա
- տալ հայեցի կրթություն ու դաստիարակություն
- նախապատրաստել աշակերտների իմացական և բարոյահոգեբանական սահուն անցում դեպի հաջորդ փուլ՝ բուհ և ինքնուրույն կյանք
- ձևավորել գիտական աշխարհայացք և նորօրյա ազատ, անկախ քաղաքացիներ:

Ուսուցիչը թեև ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, սակայն նա անհատականություն է իր ուժեղ ու թույլ կողմերով, աշխատառճով, միջանձնային հարաբերություններ հաստատելու կարողությամբ, աշխարհայացքով, արժեհամակարգով, որոնք իրենց հետքն են թողնում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների վրա:

Լավ ուսուցիչը աշակերտների մեջ ձևավորում է նաև այն միտքը, որ անձը ինքը պետք է հաղթահարի իր առջև ծառացած դժվարությունները՝ հաղթանակ տանելով և՛ իր, և՛ ուրիշների նկատմամբ: Բայց այդ պայքարը պետք է լինի կառուցողական: Հայտնի է, որ ուսումնական գործընթացը կազմակերպելիս ամեն ինչ չէ, որ կանխատեսելի է, քանի որ գոյություն ունեն մի շարք պատճառներ, գործոններ, որոնք խանգարում են ուսուցչին իրականացնելու իր մտահղացումները:

## 1.2 Ուսուցչի հեղինակության ազդեցության կարևորությունը աշակերտի անհատականության զարգացման վրա

Ուսուցչական գործունեության յուրահատկությունը կայանում է սովորողների ուսումնահիմացական և ճանաչողական գործունեության կազմակերպման մեջ: Ուսուցումը ուսուցչի կողմից սովորողների ակտիվ ճանաչողական գործունեության կազմակերպումն է՝ ուղղված նորանոր ճանաչողական խնդիրների լուծմանը: Ընդ որում տվյալ խնդիրների լուծում չի հանդիսանում ուսուցման բուն նպատակը, այլ հանդես է գալիս ուսուցչի հիմնական կրթական գործառույթի իրականացման միջոց:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ այդ գործընթացից դուրս, իրենց ազդեցությունն են ունենում ողջ ուսումնա-դաստիարակչական գործընթացի վրա, որոշում են դրա արդյունավետությունը:

Ուստի խիստ կարևորվում է դպրոցում բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ստեղծումը:

Ուսուցչի ազդեցությունը աշակերտի վրա, նրա մանկավարժական հաջող գործունեությունը կախված է ուսուցչի անձնական օրինակից եւ հեղինակությունից: Ուսուցիչը բյուրեղապակյա թափանցիկ, մաքուր ապակի է, որի միջոցով աշակերտը նայում է կյանքին [Յակովլև 1999:67]:

Ուսուցիչը մեծ ազդեցություն ունի իր աշակերտների վրա: Ուսուցչի մոտեցումը արտացոլում է իր ենթադրությունների եւ տեսակետների համակարգը ընդհանուր կրթության էության եւ խնդիրների մասին, եւ այս տեսական հիմքը որոշում է ամենօրյա ուսումնական պրակտիկայի բնույթը: Ուսուցչի արժեքները, համոզմունքները և նախապատվությունները փոխանցվում են աշակերտներին զարմանալի ուժով և կարող են ազդել նրանց հետագա կյանքի վրա: Այսպիսով, ուսուցչի անձնական օրինակը ծառայում է որպես կրթական նպատակ: Ինչ էլ որ ուսուցիչը անի, նա պետք է մշտապես հիշի իր անձնական օրինակի կարևորության մասին: Աշակերտների հետ արդյունավետ համագործակցության համար ուսուցիչը պետք է այնպիսի շփում ստեղծի, ինչպիսին կապվածությունն է՝ աշակերտների դաստիարակության փոխվստահելի գործընթացի արդյունքը: Նա ոչ միայն կրթում է իր աշակերտներին,

այլև հոգ է տանում նրանց մասին և ընդունում նրանց այնպիսին,ինչպիսին կան։ Ուսուցիչները գործ ունեն ամենաբարդ, անգնահատելի մարդու հետ։ Ուսուցչից, նրա հմտությունից, արվեստից, իմաստությունից կախված է աշակերտների կյանքը, առողջությունը, միտքը, բնավորությունը, նրա տեղը եւ դերը կյանքում, նրա երջանկությունը: Եվ այսպես, աշակերտի անձի դաստիարակության եւ կայացման համար առաջնային նշանակություն ունի ուսուցչի հեղինակությունը [Ստանկին 1998:26]:

Աշակերտակենտրոն դասարանը երկու գործող անձ ունի՝ ուսուցիչը և աշակերտը։ Երկուսն էլ ունեն որոշակի պարտականություններ աշակենտակենտրոն դասարան ստեղծելու համար։ Այդ պարտականությունները սերտորեն կապված են իրար և մեկը առանց մյուսի չի կարող ապահովել արդյունք։

Որոնք են այդ պարտականությունները։

- Ուսուցիչը պետք է պետք իմանա և հարգի աշակերտների իրավունքները, լավ ճանաչի իր աշակերտներին, իմանա նրանց թույլ և ուժեղ կողմերը, դասավանդելիս հաշվի առնի դրանք և զարգացնի նրանց մոտ սովորելու, քննադատաբար մտածելու, հաղորդակցվելու, համագործակցելու, տեղեկատվությունից օգտվելու կարողություններ, նրանց հետ պլանավորի սովորելու գործընթացը, գնահատման մեթոդաբանությունը։
- Աշակերտը պետք է լինի պարտաճանաչ, գնահատի սովորելու կարևորությունը, կարողանա կառավարել իր սովորելը, կարողանա քննադատաբար մտածել, հաղորդակցվել, համագործակցել, տեղեկատվությունից օգտվել, ուսուցչի հետ պլանավորել իր սովորելու գործընթացը, իմանա գնահատման մեթոդաբանությունը։

Թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի համար այս պահանջները հին են և նոր։ Սրանք դասական մանկավարժության պահանջներն են։

# ԳԼՈՒԽ 2
# ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

## 2.1 Սոցիոլոգիական հարցման նախապատրաստումը և իրականացումը

Փորձարարական աշխատանքն իրականացվել է Երևանի Ա. Իսահակյանի անվան N16 ավագ դպրոցում, որին մասնակցել են թվով 13 ուսուցիչ /դասղեկ/, 22 ծնող և 15-16 տարեկան 25 աշակերտ:

Փորձարարական աշխատանքի **նպատակն էր.**

- ուսումնասիրել ուսուցչի դերը դպրոցի դաստիարակչական աշխատանքների համակարգում,
- վեր հանել աշակերտների պատկերացումները ուսուցչի գործունեության և նրան բնորոշ հատկանիշների վերաբերյալ,
- բարձրացնել աշակերտների իրազեկվածությունը ուսուցչի գործառույթների վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքներն անցկացվել են 3 փուլով՝ արձանագրող /հայտորոշիչ/, ձևավորող և ստուգիչ՝ /արդյունքների վերլուծության/:

Առաջին փուլի նպատակն է եղել ուսումնասիրել.

- ուսուցչի՝ դպրոցի դաստիրակչական աշխատանքների շրջանակներում իրականցավող գործառույթները, դրանց արդյունավետությունը, նպատակահարմարությունը և համագործակցության մակարդակը ծնողների հետ,
- աշակերտների պատկերացումներրը ուսուցիչների գործունեության /բացի կրթական գործառույթը/, անձնային հատկանիշների վերաբերյալ և ուսուցչի համագործակցության բնույթը աշակերտների հետ,
- ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը աշակերտների հետ, ինչպես բարձրացնել ուսուցչի հեղինակությունը և նպաստել նրա գործունեության վերաբերյալ աշակերտների պատկերացումների զարգացմանը:

## 2.2 Հետազոտական աշխատանքի վերլուծություն և ամփոփում

Հետազոտական աշխատանքի առաջին փուլն իրականացնելու համար կազմվել է հարցաթերթիկ՝ նախատեսված ծնողների համար /տե՛ս հարցաթերթիկ 1-ը/, հարցաթերթիկ՝ նախատեսված ուսուցիչ-դասղեկեների համար /տե՛ս հարցաթերթիկ 2-ը/ և հարցաթերթիկ՝ նախատեսված աշակերտների համար /տե՛ս հարցաթերթիկ 3-ը/: Հարցաթերթիկներում եղել են հարցեր, որոնք կրկնվել են, որպեսզի կատարվի ուսուցիչների և ծնողների կարծիքների համեմատություն, ինչպես նաև եղել են չկրկնվող հարցեր, որոնք նախատեսված են եղել վիճակի բացահայտման նպատակով: Հարցաթերթիկները տեղադրված են ստորև.

**ՀԱՐՑԱԹԵՐԹ**

(ծնողի համար)

1. Համագործակցում եք արդյոք Ձեր երեխայի ուսուցիչների հետ.

   *Այո* *Ոչ*

2. Ինչ հաճախականությամբ է կայանում համագործակցությունը.

   *Միշտապես* *Հաճախ* *Երբեմն* *Հազվադեպ* *Երբեք*

3. Ինչպես կգնահատեք ուսուցիչների իրազեկվածության աստիճանը Ձեր երեխայի դասերից դուրս գործունեության վերաբերյալ.

   *Բարձր* *Միջին* *Ցածր*

4. Ինչ հատկանիշներով պետք է օժտված լինի ուսուցիչը /ընտրեք նախընտրելի տարբերակը կամ առաջարկեք Ձեր տարբերակը/.

   *Բարի* *Բանիմաց* *Պարտաճանաչ* *Խելացի* *Հոգատար*

5. Ինչ հաճախականությամբ եք մասնակցում ծնողական հանդիպումներին /ժողովներին/:

   *Միշտ* *Հաճախ* *Երբեմն* *Հազվադեպ* *Չեմ մասնակցում*

***Շնորհակալություն***

## ՀԱՐՑԱԹԵՐԹ

(Հարցաթերթ ուսուցչի համար)

1. Համագործակցում եք արդյոք Ձեր աշակերտների ծնողների հետ.

   *Այո* *Ոչ*

2. Ինչ հաճախականությամբ է կայանում համագործակցությունը.

   *Մշտապես* *Հաճախ* *Երբեմն* *Հազվադեպ* *Երբեք*

3. Ինչպես կգնահատեք Ձեր իրազեկվածության աստիճանը Ձեր սաների դասերից դուրս գործունեության վերաբերյալ.

   *Բարձր* *Միջին* *Ցածր*

4. Մանկավարժին բնորոշ ինչ հատկանիշներով եք օժտված /ընտրեք նախընտրելի տարբերակը կամ առաջարկեք Ձեր տարբերակը/.

   *Բարի* *Բանիմաց* *Պարտաճանաչ* *Խելացի* *Հոգատար*

5. Ինչ հաճախականությամբ են Ձեր աշակերտների ծնողները մասնակցում ծնողական հանդիպումներին /ժողովներին/

   *Միշտ* *Հաճախ* *Երբեմն* *Հազվադեպ* *Չեմ մասնակցում*

***Շնորհակալություն***

Ուսուցիչների կողմից պատասխանած հարցաթերթիկներից պարզ դարձավ, որ 13 հարցված ուսուցիչների հետ ծնողների 77,27 % - ը արդյունավետ համագործակցում է դասղեկեների հետ / տե՛ս գծապատկեր 1 /, 46,1 % - ը բարձր մակարդակի իրազեկվածության մակարդակ ունի դասերից դուրս աշակերտի գործունեության վերաբերյալ / գծապատկեր 2 /, թե ինչ հատկանիշներ են ուսուցիչները բնորոշում իրենց / գծապատկեր 3 / և այլն։

Ծնողների կողմից պատասխանած հարցաթերթիկներից պարզ դարձավ, որ 22 հարցված ծնողների 70,3 % - ը արդյունավետ համագործակցում է ուսուցիչների հետ / տե՛ս գծապատկեր 1 /, 59,2 % - ը բարձր մակարդակի իրազեկվածության մակարդակ ունի դասերից դուրս աշակերտի գործունեության վերաբերյալ / գծապատկեր 2 /, թե ինչ հատկանիշներով են ծնողները բնորոշում ուսուցիչներին / գծապատկեր 3 / և այլն։

Աշակերտների կողմից պատասխանած հարցաթերթիկներից պարզ դարձավ, որ 25 հարցված աշակերտների բացարձակ մեծամասնությունը գոնե մասամբ տեղյակ

է ուսուցիչների գործառույթներից / գծապատկեր 5/, թե ինչ հատկանիշներով են աշակերտները բնորոշում դասղեկ-ուսուցիչներին / գծապատկեր 3/ և այլն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Ուսուցիչ-ծնող համագործակցության վերլուծություն**







ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Դասերից դուրս աշակերտի գործունեության վերաբերյալ ուսուցիչների իրազեկության մակարդակի իրազեկվածության աստիճանի վերլուծություն**




Կապույտ՝ բարձր մակարդակի իրազեկվածություն,

Նարնջագույն՝ միջին մակարդակի իրազեկվածություն,

Մոխրագույն՝ ցածր մակարդակի իրազեկվածություն,

Դեղին՝ չի պատասխանել հարցին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ուսուցչին բնորոշ հատկանիշները










ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Ժողովներին ծնողների մասնակցության վիճակագրություն՝ ըստ ծնողների



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Ըստ աշակերտների ինչ գործառույթներ են իրականացնում դասղեկները




Պատասխաններից ելնելով՝ փորձել ենք հստակեցնել աշակերտների իրազեկվածության մակարդակներն՝ ավելի կոնկրետացնելով դրանք, այսինքն աշակերտները բաժանվել են 3 խմբի՝ աշակերտներ ովքեր ունեն հստակ պատկերացումներ դասղեկի և ուսուցիչների գործառույթների վերաբերյալ, աշակերտներ, ովքեր գիտեն միայն մի քանի պարտականություններ և աշակերտներ, որոնց պատկերացումները չափազանց թերի են: Արդյունքներն առավել պատկերավոր ներկայացված են գծապատկեր 6-ում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6




Այնուհետև, աշակերտների հետ իրականացվել է հարցում քննարկում, թե որքանով կարող է հեղինակություն հանդիսացող ուսուցիչն ազդել իրենց անձի զարգացման վրա և, ինչ ազդեցություն է կարող է թողնել աշակերտի վրա:

Աշակերտների պատասխանների վերլուծությունն ըստ տոկոսների ներկայացված է գծապատկեր 7-ում:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 7**

**Աշակերտների համար հեղինակություն հանդիսացող ուսուցչի ազդեցությունը աշակերտների վրա /աշակերտների հարցման արդյունք/**




Վերը նշված հարցաթերթիկների տվյալների ամփոփումից հետո, փորձեցինք ամբողջացնել նաև աշակերտների պատկերացումները ուսուցչի կերպարի և գործառույթների վերաբերյալ: Աշակերտների կողմից տրված պատասխանները ներկայացված են ստորև.

**Աշակերտների պատկերացումները ուսուցչի կերպարի և գործառույթների վերաբերյալ.**

**Ընդհանուր բնութագիրը**

1. Ուսուցչի բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության, աննրբանկատության:
2. Ուսուցիչը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:
3. Եթե ուսուցիչն ուզում է, որ իրեն հարգեն, առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:
4. Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, ուսուցիչն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահերը, կարիքներն:

**Պետք է ունենա՝**

1. ներքին ազատություն,
2. մտածելակերպի, վարքի ազատ ընտրություն,

3. սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում:

**Պետք է կարողանա՝**

1. պլանավորել իր մասնագիտական գործունեությունը,
2. վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները,
3. աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ որպես անհատ ձևավորմանը,
4. աշակերտներին սովորեղնել վերլուծել իրենց արտաուսումնական գործունեությունը,
5. կապեր հաստատել աշակերտների ծնողների, մյուս ուսուցիչների և հասարակության հետ:

**Ինչն է ամենակարևորը ուսուցչի համար՝ երեխաների հետ շփման մեջ.**

- բարությունը (իհարկե բարությունն առանց պահանջկոտության՝ թակարդ է մանկավարժի համար, բայց պարզվում է, որ երեխաների համար այն ուսուցչի ամենակարևոր հատկանիշն է: Գուցե երեխաները հոգնե՞լ են անդադար վերահսկումից և պահանջներից, և նրանց պետք են պարզ մարդկային զգացումներ),
- ուշադրությունը,
- հոգատարությունը,
- իրենց հասկանալը,
- կարեկից, արձագանքող վերաբերմունքը,
- շփման համար բաց լինելը,
- բարեհամբյուր լինելը,
- պատասխանատվությունը,
- մարդասիրությունը,
- անկեղծությունը,
- հումորի զգացումը,
- լրջությունը,
- հավասարակշռվածությունը,
- արդարամտությունը,
- նպատակասլացությունը,

- ժամանակակից լինելը:

**Ինչն է ամենակարևորը ուսուցչի համար՝ ծնողների հետ շփման մեջ.**

- Ազնվությունն ու արդարամտությունը
- Համբերատար լինելը
- Հանգստությունը
- Բարեկրթությունը
- Նրբանկատությունը

**Ուսուցիչ լինել՝ նշանակում է.**

- մեծ պատասխանատվություն կրել,
- կարողանալ լսել և հասկանալ,
- լինել սրտացավ,
- հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտիհոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին,
- աջակցել (ուսման, դասարանի, ծնողների և շրջակա սոցիումի հետ շփման մեջ,
- ղեկավարել և կարգուկանոն պահպանել,
- փոխարինել ծնողների, ավագ ընկերուհուն կամ ընկերոջը (եթե դրա կարիքը կա),
- արդարամիտ լինել:

Ախտորոշիչ փուլի արդյունքների վերլուծության ավարտից հետո ձեռնամուխ եղանք ձևավորող փուլին, որի ընթացքում մեր և դասղեկների հետ համատեղ կազմակերպվեցին թեմատիկ զրույցներ ուսուցիչների գործառույթների, պարտականությունների վերաբերյալ, պարզեցինք աշակերտների պատկերացումները դասղեկի վերաբերյալ: Աշակերտների կողմից տրվեցին առաջարկներ՝ ինչպիսին կցանկանան, որ լինի իրենց դասղեկը, ինչ փոփոխություններ կցանկանային անեին, որ որակներն են աշակերտները ամենից շատ գնահատում են իրենց դասղեկների և ուսուցիչների մեջ և այլն, ինչպես նաև երկկողմանի զրույց ենք իրականացրել ուսուցիչների հետ՝ աշակերտների ակնկալիքների, նրանց սպասելիքների, պատկերացումների հետ կապված, կազմակերպել համապատասխան թեմայով ֆիլմի դիտում /<<Դասարանցիներ>>/ և փորձել ենք առաջարկություններով հանդես գալ, որոնք ներկայացված են ստորև:

**Առաջարկություններ**

1. Աշակերտներին հնարավորություն տալ խոսել իրենց խնդիրների մասին:
2. Ծնողներին մասնակից դարձնել արտադասարանային միջոցառումներին:
3. Հաճախակի կազմակերպել ծնողական հանդիպումներ:
4. Հաճախակի խոսել ուսումնական առարկաներց երեխաների խնդիրների մասին:
5. Հաճախակի խրախուսել աշակերտներին:
6. Հնարավորություն ընձեռել հաջողություններ գրանցել:
7. Ծնողներին մասնակից դարձնել դասղեկական ժամերին:
8. Լինել աշակերտի ընկերն ու խորհրդատուն:
9. Ընդգծել աշակերտի ուժեղ կողմերը:
10. Մոտիվացնել և օգնել հավատալ սեփական ուժերին:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և կատարելով փորձարարական աշխատանք՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

- Ուսուցչի գործունեությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք:
- Ուսուցչի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց, որի արդյունքում կարելի է առանձնացնել ուսուցչի երեք հիմնական որակ.

1. ընդհանուր մանկավարժական հատկանիշները, որոնք ներառում են մանկավարժական կողմնորոշումն ու մոտիվացիան,
2. անհատի հոգեբանական առանձնահատկություններ՝ բնավորություն, խառնվածք, մտավոր կարողություններ և այլ,
3. մասնագիտական կարողություններ՝ գիտելիք, կարողություններ, հմտություններ /փորձ/:

- Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք նաև այն եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:
- Եվ, ի վերջո, բացի վերը նշվածները, ուսուցիչը նաև.

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով աշխատողների և ծնողների հետ,
2) նպաստում է ուսումնական հաստատության և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ,
3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն և ցուցաբերում աջակցություն,

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն,

5) ինչպես նաև, փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծումից հետո պարզ դարձավ, որ ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը թեև բավարար մակարդակի վրա էր, այնուամենայնիվ համատեղ կատարած աշխատանքից հետո այդ ցուցանիշը բարձրացավ, այսինքն՝ մենք կարողացանք հասնել մեր առջև դրված խնդրին, այն է՝ բարձրացնել ուսուցչի հեղինակությունը, նպաստել ուսուցչի գործունեության, նրա գործառույթների վերաբերյալ աշակերտների պատկերացումների զարգացմանը, նպաստել ծնող-աշակերտ-ուսուցիչ համագործակցության բարելավմանը և հստակեցնել սիրելի ուսուցչի դրական ազդեցությունը աշակերտների անձի զարգացման վրա:

Այսպիսով, ակնհայտ էր, որ նպատակաուղղված աշխատանքը տվեց իր դրական արդյունքը, որն էլ հանդիսանում էր մեր հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ., Ասատրյան Մ. Ա., Գևորգյան Մ. Մ., Կարապետյան Ն. Զ., . Բաղդասարյան Ա. Ա. Մանկավարժություն, Երևան Արտագերս, 2017, 360 էջ
2. Բալայան Ա. Մանկավարժական վարպետության հիմունքներ: Երևան, 1988թ.
3. Դալլաքյան Ա., Հ., Մանկավարժական հաղորդակցումը որպես տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հիմք. Մանկավարժական միտք, 2012, հմ. 3-4
4. Թորգոմյան Լ.Վ, Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, -Եր.: Տոներ, 2005, -135 էջ
5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Ս.Վարդումյանի խմբ., Երևան, 2005
6. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները. Հեղինակ.խումբ., Երևան, 2005 ,333 էջ
7. Հակոբյան Ա. Ա. «Մանկավարժական գործունեության հիմունքներ», Երևան 2017,140 էջ
8. Հակոբյան Գ. Հ., Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնագիտական կոմպետենտությունների ձևավորման տեսական-մեթոդաբանական հարցեր: Մանկավարժական միտք, 2013, հմ. 1-2
9. Մանուկյան Մ. Մ., Ուսուցչի անձնային և մասնագիտական որակների դրսևորումը աշակերտական դաստիարակության պայմաններում, Եր., 1989
10. Մանուկյան Ս.Պ., «Մանկավարժագիտություն», Երևան, 2002թ., [էջ 76]:
11. https://mkhitargosh.am/2019/2019,%20N1.pdf
12. https://www.vsu.am/grqer/2018/aprak/sargsyananna.pdf
13. https://obrazovanie.guru/karera/uchitel.html
14. https://kopilkaurokov.ru/klassnomuRukovoditeliu/prochee/vliianiie_lichnosti_uchitielia_na_lichnost_riebienka